ԱՐԱՐԱՏ

ԼՐԱԳԻՐ ԱԶԳԱՑԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԵՒ ԱՑԼԻՆ

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

Ամէն տեղի համար ուր այս լրագրի մուտքը արգիլուած չէ, ամբողջ 15րդ հրկանի (99 գուստ.—900 մայիս) բաժնորդագինն է 20 ֆր. կանխիկ։ Կարելի է նաև բաժնորդագրուիլ քանի ամսի համար որ ուզուի, ամէն մէկ ամսականը 2 ֆր. հաշուելով և 1900 մայիս ամսէն անդին չանցնելու պայմանով։

Նամակ և ծրարպէտք է դրկել հետևեալ հասցէով. M. PORTOUKALIAN, Rédacteur du journal *Arménia*. MARSEILLE (France).

ԱԶԳ ՏԱՐԻ ԹԻՒ 58

1900 ՓԵՏՐՈՒԱՐ 24

1900 ՓԵՏՐՈՒԱՐ 12 (Հ. Տ.)

ԳԻՆՔ

Կը հրատարակուի և Երք. օրեր

ՊԱՏՄԱՆՆԵՐ

Խմբագրութիւնը, երէկ հարկ համարի, համառօտելով և կամ ամբողջ միայն կը հրատարակէ իրեն ղրկուած գրութիւնները։ Պարտաւոր չէ վերադարձունել չհրատարակուած ձեռագիրները։

Յանուցմունքներ կընդունուին հայերէն և ֆրանսերէն լեզուով։

Յանուցման 1 միլիմետրը 1 սանդիմ կարժէ. 1 գիծ ագիւ 2 սանդիմ։

Les annonces, en français et en arménien sont reçues, aux bureaux de Rédaction : Rue Glandevès, 17.

ԱՐՄԷՆԻԱՅԻ ԱՄՍԱԿԱՆ ԲԱԺՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆԸ

Արմենիայի բաժնորդագրութիւնը չրջանի վրայ և ոչ թէ թիւի վրայ լինելով, մենք առաւելութիւն տուած էինք անոնց որոնք Արմենիայի ամբողջ չրջանին բաժնորդ կը գրուին, օգոստոսէն սկսելով. այնպէս որ ամբողջ չրջանի (օգոստ.-մայիս) բաժնորդագինն է 20 ֆրանգ, իսկ չրջանի սկզբէն բաժնորդ չեզոքներին համար ամսական 2½ ֆր. բաժնորդագին նշանակուած էր։

Բայց որովհետև յաճախ կը պատահի որ օգոստոս ամիսը բաւական անցնելէն յետոյ ալ բաժնորդագրուիլ ուզողներ կը լինին, ատոնց դիւրութիւն մը տալու համար կորոշենք այժմ, ներկայ 15րդ տարեչրջանին համար, որ ունէ ամսագլխէ սկսելով և քանի ամսի համար որ ուզուի, Արմենիայի բաժնորդագրութիւն կընդունինք, ամսական բաժնորդագին 2 ֆրանգ միայն հաշուելով և 1900 մայիս ամսի վերջէն անդին չանցնելու պայմանով։

Այսպէս եթէ մէկն ուզէ յունուարէն սկսած բաժնորդ գրուիլ մինչև ներկայ 15րդ չրջանի վերջ (99 յնր.–900 մայիս), 10 ֆրանգ միայն պէտք է վճարէ փոխանակ 12½ ֆր.ի ինչպէս կը վճարուէր առաջ. կամ եթէ 1 կամ 2 ամսի համար միայն ուզէ բաժնորդ գրուիլ, 2 կամ 4 ֆր. միայն պէտք է բաժնորդագին վճարէ։

Կը յուսանք որ այս նոր դիւրութիւն ընծայելով գոհացում մը տուած կը լինինք անոնց որոնք Արմենիայի բաժնորդներ գտնելու իրենց փափաք յայտնած և այս կէտ, իբրև դժուարացուցիչ հանգամանք մը նոր բաժնորդ գրուիլ ուզողներուն համար, մեր ուշադրութեան յանձնարարած էին։

Կը խնդրենք որ նոր բաժնորդ գըրուզողները յատկապէս իմացունեն մեզ թէ ո՛ր ամսի սկզբէն կուզեն ստանալ թերթերը։ Եթէ այդ նշանակուած չլինի իրենց նամակի մէջ, մենք կը ղրկենք այն ամսի սկզբէն որի մէջ ընտացած ենք իրենց նամակ։

Կը յիշեցունենք նաև թէ անոնք որոնք «Արմէնիայի Օժանդակ» կարձատ նագրուին կանոնագրին համեմատ, իրաւունք կը ստանան ուրիշների համար Արմենիա թերթել տալու իրենց ծրարով, ամսական մէկ ֆրանգ բաժնորդագնով միայն։

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Հայրենագիտութիւն.—Նամակ Ռուսիա-էն (Թիֆլիս).— Հայեր ի Թիւրքիա. —Կիլիկիայի կաթողիկոսական խնդիրը.—Պաղտատի երկաթուղին.— կարս էրզրումի երկաթուղին.—Ռուսիա եւ Պարսկաստան.—Անգլիական նիւպատոսարանի մը վրայ յարձակում Թիւրքիոյ մէջ.— Սուլթանին Եւրոպա գալու գրոյցը.— Տեղական.— Նոր հրատարակութիւններ.— Ներքին լուրեր.— Անգլեւքրաճավաչեան պատերազմը.— Արտասահմանի լուրեր — Ծանօթ ցուցմունք։

ՀԱՑՐԵՆԱԳԻՏՈՒԹԻՒՆ

Անհամար փորձեր ցոյց են տուել որ մեր գործունէութիւնները ուղիղ բանականութիւնից և իրական պայմաններից աւելի, առաջացել են և իրագործել լոկ ղդացմունքից։

Մենք հոս ղգացումը չէ որ պիտի դատապարտենք, այլ այն ծանօթ հանգամանք, այն ընդհանուր և աչքի ղարնող տգիտութիւն որ երեան են հանում առհասարակ մեր յեղափոխական գործունէութեան կազմակերպիչները, լինելով զուրկ կատարեալ և բազմակողմանի ծանօթութիւններից հայրենիքի աշխարհագրական դիրքի, ազգաբանութիւնների հատանական թիւերի, յարաբերութիւնների և ներքին գանագան պայմանների ու պահանջների նկատմամբ, որոնք եթէ հատատ դիտցուած և նրանց համեմատ գործուած լինէին, հատանակապարար մեր հայրենիք ղերծ կը մնար ծանօթ դժբաղդութիւններից. մինչ այսօր այսքան դառն փորձերից վերջն էլ, միևնոյն կոյր գործունէութիւնն է որ իր նախիրները կը չարունակէ։

Յեղափոխական գործը վարելու համար՝ բարձր կրթութիւն, դրելու և դիւթելու յատկութիւններ, եւրոպական ապահով միջավայր մը և հայրենիքի մասին եւ ատոր անոր՝ մեծ մասամբ օտար՝ աղբիւրներից դուրս եկած տեղեկութիւններով կեսատ պըռատ ծանօթութիւններ ունենալը բաւական և դոհացուցիչ պայմաններ չեն։

Երկրին և հանգամանքներին ընդհարակ հմտութիւն և գիտակցութիւն, որ անպայման հարկաւոր են թէ՛ գործիչների և թէ՛ հետևողների համար, իրանց բացակայութիւնով միայն կը փայլեն։ Եւ զարմանալին էլ այն է որ մեր յեղափոխական գանագան կուսակցութիւնները այդ նպատակով շատ քիչ կամ բնաւ ճիգ մը արած չունին, չի նայած որ հարստահարութիւնների, նոր կոտորածների, նորանոր խնդիրների նկատմամբ վեր ի վերոյ բան իսկ երկրից, տեղական աղբիւրներից բազմաթիւ գրութիւններ հաղորդող ոչ միայն լրագրակիցներ, այլև գործիչ. օժանդակներ ունենալ կը թուին կամ կը ցուցնեն։

Աւելի ցոյց է տալիս թէ մենք առհասարակ որքան թերհաւրէն ենք ըմբռնում հայրենիքի փրկութեան ծանրակշիռ գործը և այդ անհաչիւ կերպերից առաջացած ծանր հետևանքներով ցոյց կուտանք նոյնպէս թէ ո՛րքան սառնասրտութեամբ ենք վերաբերում հայաստանցի հայ ժողովրդի աննախանձելի կացութեան, որը մենք ենք պատճառում, որին մենք ենք տեղի տալիս...։

— Ո՛չ. բաւական է որքան կոյր յեղափոխութեան մը ջատներ քաշեցինք։ Ա՛լ ժամանակ է որ մեր գործիչներ գործին և պահանջներին գիտակից լինելով ձեռնարկեն գործունէութիւնների, որոց ծանր պատասխանատուութիւններ այլևս քաւութեան ահմաններից չա՛տ անցել են դժբաղդաբար։

Եւրոպայի մեզ համակիր ու հակակէտ պետութիւններ այս ամենի կատարեալ գիտակցութիւն ունենալով, դրանց համեմատ են գործում մեզ նկատմամբ. թուրք կառավարութիւնն անգամ յատուկ հաչիւներով և ծրագրերով էր որ կոտորածներ առաջացրեց. իսկ մերայինների այն ժամից չատեր, որ իրանց վրայ առած էին ներկայ դժուարին ու փշոտ ասպարիզի մէջ ազգն առաջնորդելու փափուկ աշխատութիւնը, գրեթէ այդ նախահոգութիւն չունեցան։

Տգիտութի՞ն թէ անտարբերութիւն. մենք այդ չենք քններ։

Ազգեր տարիներից տարի նոր վիճակագրութիւններով իրանց նորանոր առաւելութիւնները են թուում։ Դարերից ի վեր է որ մենք այդ չնորհքից զուրկ ենք եղել. բայց դժբաղդաբար չենք ունեցել նոյնիսկ մեր կորուստների ոչ միայն հաւանական թիւը, այլև աւելի կարևորը՝ դրանց առաջացնող պատճառները էլ չեն փնտռուած, լինին քաղաքական, տնտեսական կամ պատահական (ասվ, հիւանդութիւն և այլն), իսկ աւելորդ է ասել թէ այդ ամենի դէմ դարմաններ և միջոցներ ձեռք առնելու և ստեղծելու համար, անհրաժեշտ են մանրակրկիտ ծանօթութիւններ։ Նոյն իսկ վերջին տարիների մէջ երբ ժողովրդի ամենահեռաւոր և անծանօթ խաւերի հետ անգամ թափանցումներ և հաղորդակցութիւններ շատցան, դեռ որոշ տեղեկագիրներ չեկան՝ եղած բովանդակ կոտորածներին և հետևանքներին նկատմամբ. մինչ որ սակայն ստոյգ է թէ ահագին ջնասներ առաջացրեց. ամբողջ գիւղեր և գաւառներ ամայացան սրածութիւններից, գաղթականութիւններից, սովերից և համաճարակներից։

Այսպիսի գործի մը դժուարութիւնները չենք ուրանար. բայց այսքան սկզբնական, տարրական և կարևոր պահանջ մը գլուխ բերել չի կարողացող գործունէութիւնն արդեօք ոյժ և հեռատեսութիւն կունենա՞ն և իրաւունք ունի՞ն ազգին բաղդն կոյր-զկուրայն և քամահրելու։

ՄԵՆ-ՍԷ

ՆԱՄԱԿ ՌՈՒՍԻԱՅԷՆ

Թիֆլիս, յնր. 20/1 փետր. 900

Պարսկաստան էլ ռուսական լայնածաւալ կայսրութեան մի մաս պէտք է համարել այսուհետև։ Ջի այն սահմանագրութիւն որը բաւական ժամանակներից ի վեր ձգձգուում էր, վերջ առաւ։ Մեր կառավարութիւնը 20 միլիոն րուբլի (54 միլիոն ֆրանգ) փոխառուաւ Պարսից կառավարութեան։ Այսինքն Պարսկաստան ծախու առնուեցաւ մեր կառավարութենէն 20 միլիոն րուբլիով, չի նայած որ մեր կառավարութիւնն էլ նիւթապէս չատ յաղող պայմանների մէջ չէ և յաճախ պարտաւորուում է եւրոպական հրապարակներին դիմել. բայց երևում է որ ապրանքը չատ էժան գտնելով չուզեց այս անգամ առիթը ձեռքից փախցունել և միանգամ ընդ միշտ Շահի կառավարութեան հետ հաչիւները կարգադրեց։

Պէտք է խոստովանուել որ Ռուսները իրանց այս մեծ և նոր յաղթութիւնը գլխաւորապէս պարտաւոր

Ա՛յ ինչ, ասում է մեկը, ուրեմն 2-300 կոպեկներ, որոնք իրարից 2-300 տարի հեռու են ապրել, ամբողջ մի դար են կազմում, ահագին ժամանակ է, որ ընկած է նրանց միջև, և այդ ամբողջ ժամանակի ընթացքում ոչ մի փոփոխություն չի կրել նրանց արժեքը, ոչ մի տատանում չի եղել նրանց մեջ, ոչ մի բարձրացում կամ իջեցում։ Ինչպես որ եղել են, այնպես էլ մնացել են։ Ինչպես որ եղել են, այնպես էլ մնացել են։ Ինչպես որ եղել են, այնպես էլ մնացել են

համատանէն Թէհրան ճիւղաւորութիւնով մը։ կը յուսան որ 4 տարիէն կարելի է չինել այդ գիծ։

— Պէրլինի «Թակպլաթ» լրագիրը կը գրէ թէ Պարսկաստան գտնուող ռուսիացի զինուորական մարդիկ մը յայտարարեր է Ռուսիոյ պատերազմական նախարարին թէ Պարսիկներն իրենց կառավարութեան կաշառակերութենէն և բռնութիւններէն տաղտկացած լինելով, կը փափաքին որ Ռուսիա իրենց երկիրը գրաւէ առնէ և թէ Պարսկաստանի տիրելու համար՝ մէկ զօրաբաժին և մէկ քանի գունդ կոզակներ միայն կը բաւեն։

Պատերազմական նախարարը պատասխաներ է եղեր թէ Ռուսիա զէնքի չգիմեր Պարսկաստանի դէմ, այլ ուշադրութեամբ պիտի դիտէ դէպքերը, Ռուսիային Պարսկաստանի հետ աւելի սերտ յարաբերութիւն մը դիւրացունելու համար որպէսզի Պարսկաստանի մէջ վերանորոգում մը լինի որ ամբողջ Ասիային կրնայ օգտակար լինել։

ԱՆԳԼԻԱԿԱՆ ՀԻՒՊԱՏՈՍԱՐԱՆԻ ՄԸ ՎՐԱՑ ՅԱՐՁԱԿՈՒՄ ՓԻՒՐՒՐԻԱՅԻ ՄԷՋ

Գէյրոյթէն կը հեռագրեն փետր. 22ին.

Սայտահ մահմէտականները վիրաւորեցին Սայտահ անգլիական դերհիւպատոսի տունն և հիւպատոսարանն ալ պաշարեցին։

Պէյրութի նահանգապետը (վալի) զօրք ղրկեց Սայտա դեր-հիւպատոսին օգնութեան և Պէյրութի անգլիական ընդհանուր հիւպատոսն ալ ելաւ գնաց այդ անկարգութիւնների ծագած տեղը։

ՍՈՒԼԹԱՆԻՆ ՍԻՐՈՎԱ ԳԱԼՈՒ ՋՐՈՑԸ

Ասկէ առաջ լուր մը տարածուած էր եւրոպական թերթերին մէջ — որը մենք վերապահութեամբ միայն առած էինք—թէ սուլթանհամիտ իր պաշտօնեաներով մէկտեղ Եւրոպա պիտի գայ, մանաւորապէս Բարիզի Արուեստաս. հանդէսն այցելելու համար։

Կ.պոլսէն եկած վերջին հեռագրերը կը հերքեն այդ լուրը, ըսելով որ նոյն իսկ եթէ սուլթանն ուզէր այցելել աշխատանքի և յառաջդիմութեան այդ ցուցահանդէսը, շատ հաւանական է որ պետական կարևոր գործեր իրեն արգելք պիտի լինէին այդպիսի ճանապարհորդութիւն մ՚ընելու։

ՏԵՂԱԿԱՆ

Եւրոպայի Հայոց Առաջնորդութեան կողմէն հետեւեալ շրջաբերականը ղրկուած է Մարսէյլի մեր Ազգային ժողովի անդամներին։

Ծառայիկայ կիւրակէ, փետր. 25. հոգեհանգստեան պաշտօն պիտի կատարուի վասն հոգւոյ բազմամեայ հովուի Հայոց քաղաքիս հանգուցեալ Տէր Սահակ քահանայ Իւթիւճեանի։

Սուրբ պատարագը պիտի սկսի ժամը 10½ին։

Ծեռ աւարտման ժամերգութեան՝ ժամը մէկը 11½ին՝ անմիջապէս Ազգային ժողովը պիտի գումարուի՝ օրակարգի կարևոր խնդիրն ըլլալով նոր քահանայի ընտրութիւնը, որոյ համար Պատ. Հոգաբարձութիւնն տեղեկութիւններ պիտի հաղորդէ Պատ. ժողովին, որուն կը մնայ ընել վերջնական տնօրէնութիւնը։

Կը խնդրուի ուրեմն Ձեր Ազնուութենէն՝ որ բարեհաճիք որոշեալ ժամուն ներկայ գտնուիլ ժողովին՝ ի նկատի ունենալով խնդրոյն կարևորութիւնը։

23 փետր. 1900 Մնամք աղօթարար

Մաբսեյլ ԳԷՈՐԳ ԵՊ. ԻՒՓԻՃԵԱՆ

ՆՈՐ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆՆԵՐ

Շնորհակալութեամբ ստացած ենք Մարսէյլ հրատարակուող Revue Populaire ամսաթերթի փետրուարի թիւը որի բովանդակութիւնն է հետեւեալը։

A nos lecteurs.—De tout un peu.—Causerie du Docteur : Les douleurs rhumatismales.—La Vie à la Maison.—Echos et nouvelles scientifiques.—Grand Théâtre.

Զուարճալին ու օգտակարը միացունելով գիտական ծանօթութիւնները ռամկացունելու ծրագիր ունեցող այս ֆրանսերէն ամսաթերթի տարեկան բաժնորդագինն է Մարսէյլի և անոր սահմանակից նահանգների համար 2 ֆրանգ. Ֆրանսայի ուրիշ տեղերին համար 2 ֆր. և 50 սանթիմ. իսկ արտասահմանի համար 3 ֆր. և 50 սնթմ.։

Բաժնորդագրութեան և այլ տեղեկութիւնների համար դիմել հետեւեալ հասցէին.

Rédaction de la «Revue Populaire»
15, Quai du Canal
MARSEILLE

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

Ռուսիոյ կայսրն իր կենդանագիրը, իր ձեռագրով ստորագրած, նուէր ղրկեց արտաքին գործերի նախարար Տ. Տելքասէին։

— Թիւրքիոյ սուլթանին ղրկած Նիշանի-իմթիյազը Հանրապետութեան նախագահ Տ. Լուպէին յանձնուեցաւ անցած շաբաթ օր յատուկ պատուիրակութեան մը ձեռքով որ Կ.պոլսէն եկած էր։ Էլճիէի պալատէն ղրկուած կառքեր թիւրք պատուիրակութիւնը կրան Օթէլէն ուր իջևանած էր, առին պալատ բերին կէսօրին 20 վայրկեան ետացած։ Պալատի բակին մէջ չորուած զօրքերը ռազմական քաղաքավարութեան օրենքներով ընդունեցին զիրենք. նըւագածուներէ խումբն երգեց նախ «Համիտիյէ» քայլերգը և ապա «Մարսեյէզ»ը։ Պալատական պաշտօնատարներն ընդունելով սուլթանի պատուիրակները, գեսպաններէ ընդունելութեան սրահը տարին զանոնք ուր պատրաստ կը գտնուէր Հանրապետութեան նախագահ Տ. Լուպէ, իրեն հետ ունենալով արտաքին գործերի նախարար Տ. Տելքասէն և Կ.պոլսէ Ֆրանսական դեսպան Տ. Քոնթանը որ այս միջոցին Բարիզ կը գտնուի։ Բարիզի օսմանեան դեսպան Մխիները պէյ որ դեսպանատունէն ուղղակի էլիզէի պալատն եկած էր, սուլթանի պատուիրակները ներկայացուց Տ. Լուպէին։ Երկու կողմէն փոխադարձ քաղաքավարական մէկ երկու կարճ խօսակցութիւններէ յետոյ, Թիւրք պատուիրակութիւնը Հանրապետութեան նախագահին մատոյց ադամանդներով և չափիւղաներով զարդարուած պատուանշանը որ գեղեցիկ պահարանի մը մէջ դրուած էր։ Այդ ընդունելութիւն կարճ տևեց և պետրհակալութեան պաշտօնական խօսքերէն յետոյ վերջացաւ։

Արդէն կէսօրի մօտ էր։ Տիար Նախագահը ճաշի հրաւիրեց իր հիւրերը ճաշէն յետոյ, Հանրապետութեան նախագահը պատուի լեգէոնի մեծ խաչի պատուանշանը չնորհեց Բարիզի օսմանեան դեսպան Մխիները պէյին, մեծ սպայի պատուանշանը՝ պատուիրակութեան գլուխ ճէլատ պէյին և հրամատարի (commandeur) պատուանշանը՝ պատուիրակութեան անգամներէն եղող զօրավար Ապտուլլահ փաշային և Թէվֆիք պէյին։

— Ծերակոյտ ժողովը երկուշաբթի օրէն իվեր Բարձր դատարանի վերածուած է, գատելու համար երես. փոխան Տ. Մարսել Հապերը որ Հայրենասիրական Միութեան նախագահ Տ. Տէրուլէտի ընկերն էր, բայց անոր և միւս քաղաքական ամբաստանեալների ձերբակալուած ժամանակը բացակայ լինելով, յետոյ եկած զինքյանձնառած է արդարութեան առեանին։

ԱՆԻԼՍԻՐԱՆՍՎԱՆԱՆ ՊԱՏԵՐԱԶՄԸ

Պատերազմի դաշտէն եկած լուրերը շատ որոշ չեն և մինչև իսկ հակասական։ Ցերեկ զօրավարին պօերներէ վրայ տարած յաղթութենէն և Քըմպըրլիի ազատուելէն յետոյ, Անգլիացիներն ինկան Քրօնիէ զօրավարի եւ առնէն, անոր չխոցելու համար որ կարենայ յետ քաշուիլ։ Բայց ինչպես կերևի, գեռ չյաջողեցան չրջապատելով պաշարել և գերի բռնել։ Քրէլեֆէնների զօրաբաժինը որ Քրօնիէ զօրավարի եռանէն ինկած է, անցած կիրակի և երկուշաբթի օր սաստիկ կռուի բռնուեր է անոր զօրաբանակի վերլապահ մասին հետ։ Պօերները յաջողութիւն մ՚ըրած են թէև շատ կորուստներ ունեցեր են։ Մօտաւոր. Րիվըրէն անգլիական հեռագիրը մը կըսէ թէ Քրօնիէ զօրավարն եւ ընքշաբթի օր զինադադար խնդրած է։ Բայց երբ հինգշաբթի օր (փետր. 22) Լորտերի խորհրդարանին մէջ հարցում եղաւ Լորտ Սալզպըրիին թէ ճի՞շդ է Քրօնիէ զօրավարին զինադադար խնդրած լինելու լուրը, նախարարապետը պատասխանեց թէ ինք այդ մասին ոևէ տեղեկութիւն չէ ստացած։

Իսկ ալմանական լրագիրներուն ճամբայստաալէն ստացած հեռագիրներին նայելով, Պօերները մեծ կորուստներ կը պատճառեն Անգլիացիներուն և Քըմպըրլիի չուրջ նորէն սկսեր են իրենց դիրքեր բռնել։

ԱՐՏԱՍԱՀՄԱՆԻ ԼՈՒՐԵՐ

Պէրլինէն կիմացուին որ Հանքածուխի պակասութեան պատճառով՝ Սաքսոնիոյ երկաթուղիներուն տեսչութիւնը, երկուշաբթի օրէն սկսած, պակսեցուցած է Աուէրպաչ և Էյրղէպիրժի մի քանի քաղաքներն երթևեկող ճանապարհորդական գնացքներուն թիւը. պարտաւորուեր են գործոցները արձակել, տաքցունելու համար ածուխ չգտնուելուն պատճառով։

— Գուլկարիոյ Գուրկազ նաւահանգիստ քաղաքին մէջ արիւնահեղ կռիւ մը եղած է որ քիչ մնաց նախարարութեան հրաժարման պատճառ գառնար։

Երկու պուլկար սպայներ, որոնցմէ մին պահեստի զօրքերի հարիւրապետ և ռուսական նաւային բնկերութեան մը գործակատարն է և միւսն ալ քաղաքին պահապան զօրքերի գունդին մէջ տեղակալ, պարահանդէսի մը մէջ իրար հետ վէճի բռնուելով իրար նախատեցին։ Երբ պարահանդէսէն դուրս ելան, պահեստի զօրքերի սպան փողոցին մէջ բէվօվէր պարպեց միւս սպային վրայ. սա ալ փոխադարձաբար կրակ ըրաւ իր հակառակորդի վրայ որ տեղնուտեղը ինկաւ մեռաւ։

Քաղաքի կառավարիչն իսկոյն ձերբակալել տուաւ մարդասպանը. բայց Գուրկազի ռուս դեր հիւպատոսն քաջալերուելով չուզեց յանձնել այդ սպայն բերդապահ զօրքերի հրամանատարին որ զինուորական իշխանութեան անունով կը պահանջէր զայն. Ատոր վրայ զօրքերն ու սպայները գնացին կառավարչի պալատը իրենց ընկեր պահանջելու համար և ժողովուրդն այդ յուզումէ վախցած սկսաւ խանութները փակել։ Այլ սակայն քաղաքի կառավարիչն այն ատեն միայն զիջում ըրաւ երբ զօրքերի հրամանատարը պատերազմական նախարարէն հեռագրով հրաման ստացաւ քէ ձերբակալուած սպայն պէտք է զինուորական իշխանութեան յանձնուի և ատոր համար երէք հարկ լինի, կարելի է բռնի ոյժ գործադրել։

Պատերազմական նախարար Տ. Բարբիքօֆ գործարութեամբ յայղղեր էր այդ հրաման ղրկելու որոշումն ստանալ նախարարական խորհուրդէն, սպառնալով որ իր հրաժարական կուտայ երէք այդ որոշումը չտրուի և երէք պաշտօնակից չը լինի Գուրկազի կառավարիչը որին կը պաշտպանէր ներքին գործերի նախարար Տ. Բատոսլաւօֆ։

— Ռումանիոյ մայրաքաղաքին Գուքրէշի մէջ քաղաքական պատճառով սպանութիւն մ՚եղած է այս օրեր։

Ծիթօվսքի անուն Գուլկար մը որ թիւրք կառավարութեան կողմէն լրտեսութիւն կընէ եղեր, փողոցին մէջ արիւնաթաթախ սպանուած գտնուեցաւ։ Դատարանք հարցաքննութիւն բացաւ և իմացուեցաւ որ Գօյանօֆ մականուանեալ Իլիէֆ անուն Գուլկար մը սպաններ է զայն. Մակեդոնիոյ պուլկարական ազգային յանձնաժողովի հրամանին համեմատ։

Իլիէֆ ձերբակալուելով, ամեն բան խոստովանած է։ Ըսեր է թէ ինք այդ ընելով արդարութեան և հայրենասիրութեան պարտք մը կատարած է։ Ցիթովսքի թիւրք կառավարութեան ըրած մատնութիւններովը մեծ վնաս պատճառած էր չատ մը Գուլկարներու որոնք բանտարկուած էին փախչելով Ռումանիա ապաստանիլ։ Իլիէֆ յայտարարեց նաև թէ ինք սպանած էր Սթամպուլօֆը։ Թէև ասկէ առաջ իրեն Սթամպուլօֆի սպանողն՝ մահով պատժուած է մէկը Սոֆիայի մէջ, բայց միշտ այս կարծիքը կար թէ նախորդ ընկերներ ալ ունեցած է, կերևի թէ այդ ընկերներէ մին ալ Իլիէֆ եղած է։

Իլիէֆի ըրած սպանութիւնն ու յայտնութիւնները մեծ յուզում պատճառած

են։ Մակեդոնացի չաո Պուլկարներ ձերբակալուեցան Պուքրէշի մէջ։ Կենթադրուի որ Իլիէֆ իրեն գործակիցներ ունէր։

— Ինֆլուէնցան սաստիկ կերպով տարածուեր է Պէրլինի մէջ։ Կայսրորդի Օսքար և Յովակիմ իշխաններն ալ հիւանդ պառկած են. սոր համար է որ կայսրուհին չկրցաւ Վիլհէլմ կայսրին հետ մէկտեղ Հիւպէրթիւսթօք երթալ։ Փառաքաշեա Տ. Փիրշնէրն ալ ինֆլուէնցայէն հիւանդ պառկած է։ Տուն չկայ, մանաւանդ քաղաքի հիւսիսային մասին մէջ, որ հիւանդ մը չգտնուի։

— Անգլիոյ Հանրային ժողովը 32ի դէմ 164 ձայնով ընդունեց 120,000 հոգիէ բաղկացած Ճայուն զօրաբանակ մը ունենալու օրինագիծը։ Իրլանտացի երեսփոխանները հակառակ քուէ տուին։

Ժողովը նոյնպէս Իրլանտացիներու բողոքներուն հակառակ, 31ի դէմ 207 քուէով որոշեց 13 միլիոն անգլիական ոսկիի նոր վարկ մը տալ կառավարութեան, Թրանսվաալի պատերազմին առթով։

— Ալմանիոյ երեսփոխանական ժողովին մէջ Տ. Ռիմպէր և ալզաս-լօրէնցի ուրիշ երեսփոխաններ առաջարկեցին Ալզաս-Լօրէնի համար հաստատուած բացառիկ վարչութեան մը դիկտատորական գրութիւնը ջնջել և այդ նահանգի ալ կայսրութեան միւս նահանգներուն հաւասար իրաւունքներ տալ։

Պետական քարտուղար Տ. Հոհէնլօհէի հակաճառութեան հակառակ, Երեսփոխանական ժողովը ճայներու մեծամասնութեամբ որոշեց Ալզաս-Լօրէնի համար այդ բացառիկ վարչական ճնշողական դրութեան չնջուիլը։

— Լուր կայ թէ Պուլկարիոյ Ֆէրտինանտ իշխանն իր զաւակներով մէկտեղ օրթոտոքս եկեղեցին պիտի ընդունի, Ռուսիոյ Ցոնսթանթէն Նիքոլայեվիչ մեծ դուքսի աղջիկներէն մէկին հետ ամուսնանալու համար։

Նիչպէս ամեն լրագիրներ, Արմէնիան ալ կընդունի ծանուցումներ հրատարակելու համար. անոնք որ պէտք կունենան Արմէնիոյ միջոցով մէկի դիմում անել կամ մի բան յայտարարել, պատրաստ ենք ընդունելիրենց ծանուցումներ, ըստ լրագրական սովորութեան։ Ծանուցումներուն գիները նշանակուած են Արմէնիոյ հակատը, տառէ վրայ հաշուելով. 1 երկաթագրի (գլխագիր) համար 2 սանտիմ և 1 բոլորգրի համար 1 սանտիմ։ 3 անգամ դրուելիք ծանուցումի գնին վրայ 0/0ին 10 զեղչ կը լինի. 10 և աւելի անգամներ դրուելիք ծանուցումի գնին վրայ 0/0ին 30 զեղչ։ Սակարկութիւն չըկայ։

ԳՐԱԿԱՆ ԱԶԴ

Ոմանք իրենց հեղինակած կամ հրատարակած գիրքերէն կը ղրկեն մեզ, Արմէնիոյ խմբագրատան մէջ ծախուելու համար։ Որպէս զի թէ՛ իրենք աւելորդ նեղութիւն կրած չլինին ղրկելու համար և թէ՛ մենք ալ ոեւէ պատասխան մը իրենց գրելու համար, այդպիսի փափաք ունեցողներու ուշադրութիւնը կը հրաւիրենք հետեւեալ տողերուն վրայ։

Նոր գիրք մը հրատարակողը նախ 2 օրինակ անկէ պէտք է ղրկէ մեզ, անոր հրատարակութիւնը լրագրական սովորութեան համեմատ ծանուցուելու համար Արմէնիոյ մէջ «Նոր հրատարակութիւններ» վերնագրին տակ։ Իսկ եթէ կուզէ նաեւ որ նոյն գրքէն ծախու գտնուի Արմէնիոյ խմբագրատան մէջ, պէտք է որ մասնաւոր նամակով մը իմացունէ մեզ իր պայմանները և մեր հաճութիւն ստանալէ յետոյ ղրկէ մեզ մօտ ծախուելու համար։ Կը խնդրենք որ ոչ օք չկանխէ մեզ այդպիսի գրավաճառական յանձնարարութիւն անել, առանց մեր հաւանութիւն ստացած լինելու։ Հակառակ պարագայի մէջ, իրենց ղրկածի համար ոեւէ պատասխան տալու պարտաւոր չենք համարեր մեզ։

Մեզ յայտնուելիք պայմաններն են.

1. Գրքին գինը քանի՞ է Մարսէյլի մէջ ծախելու համար։ Եւ որովհետեւ ընդհանրապէս Մարսէյլէն դուրս զանազան տեղերէ գնել կուզուին այդ գիրքեր, հարկ կը լինի Մարսէյլի համար նշանակուած գնին վրայ աւելցունել նաեւ փոստի ծախքը։

2. Ի՞նչ զեղչ կը լինի խմբագրութեանս համար եթէ կանխավճարով ուզենք գնել. և ի՞նչ զեղչ կը լինի եթէ յանձնարարութեամբ միայն ընդունիլ ուզենք (այսինքն ծախուածին միայն ստակը տալու, իսկ չծախուածը իր տիրոջ վերադարձնելու պայմանով, փոստի ծախքերը տիրոջ հաշուին անցնելով)։

ԾԱՆՈՒՑՈՒՄՆԵՐ

ԾԱԽՈՒ ԳԻՐՔԵՐ

Արմէնիոյ խմբագրատան մէջ ծախու կը գտնուին հետեւեալ գիրքերը որոնց առջեւ նշանակուած գիներուն մէջ հաշուուած է նաև ղրկելու փոստի ծախքը։

Ծրարները ապահովագրուած (recommandé-registered) ստանալ ուզողները պէտք է որ ամեն մէկ ծրարի (մինչեւ 2 քիլօ) համար 25 սանթիմ ապահովագրութեան ծախքը վճարեն։

Արմէնիոյ խմբագրատան մէջ ծախու գտնուած գիրքերի մանրամասն ցուցակը հրատարակուած է Արմէնիոյ 14րդ շրջանի 77, 78, 79, 80 և 81 թիւերուն մէջ։

Այդ թիւերէն յատկապէս աւելի տպած լինելով, պատրաստ ենք ձրիապէս ղրկել անոնց որոնք կը փափաքին մեր գրացուցակները ունենալ, եթէ գոնէ 50 սանթիմ ղրկելով գիրքուղեն մեզնէ նախապէս այդ ուղուած գրքի ծրարին մէջ դրուելով կը ղրկուին գրացուցակներն ալ։

Ամեն երկրի փոստերը, քանի՛ սանթիմի համար ալ լինի, մանրամասը փոստ կուտան մեզ վճարուելու համար Մարսէյլի մէջ։

Արտօսր Հայաստանի կամ Տեղեկագիր Բալուայ, Քարբերդու, Զարսանճագի, Ճապաղչուրի և Երզնկայու։ Բաւելուած ըստ խնդրանաց ազգասիրաց «Խիզան դաւառ»։ Աշխատասիրեաց Պօղոս Ծ. վ. Նալբանեան։ 2 ֆրանգ։

ԻՄ ՀԱՅՐԱՍՊԱՆ ԸՆԿԵՐՔ

(Կ. ՊՕԼՍՈՑ ՀԱՑՈՑ ԿԵԱՆՔԷՆ ԱՒՆՈՒԱՆ ՄԻ ԻՐԱԿԱՆ ՎԷՊ)

ԳՐՔԵՑ ԱՊԱԿԱՌԻՊ

Ա.յս հետաքրքրաշարժ գրուած կ՚ներկայացունէ ընտանեկան տխուր պատկերներէ մին ուր կը տեսնուի թէ անբարոյական մի հայր իւր ապականուած վարքուբարքով որչա՛փ չարիք ներէ պատճառ դարձած է և վերջ ի վերջոյ ինք ալ իւր որդուս ձեռքով սպաննուած և անհետացած է այ խարհէ։ Գինն 1 ֆրանգ, (75 սանթիմ)։

ԺՔ

ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆ Մ. ՓՈՐԹՈՒԳԱԼԵԱՆԻ

ՆՄՈՇՆԵՐ

Մ. ՓՈՐԹՈՒԳԱԼԵԱՆԻ
ԳՐԱԾ ՈՏԱՆԱՒՈՐՆԵՐԷՆ

Մ. Փորթուգալեանի գրած հայրենասիրական ոտանաւորներէ մի քանի ամփոփուած են այս տետրակի մէջ իրեւ նմոյշներ զանազան քաղաքներու մէջ և զանազան տպաւորութիւններու տակ իւր երբեմն գրած ոտանաւորներուն որոնք ժամանակին հրատարակուած չլինելով կորսուած են այժմ։ Այն մի քանի ոտանաւորները որոնք իրենց նմոյշները ամփոփուած են այս տետրակի մէջ, ցիր և ցան կը գտնուին Կ. Պոլիս տը պագրուած ազգային երգարաններուն մէջ՝ որոց վերստին տպագրութիւն չտալուց արդէն արդիլուած է, և Ասիա և Արմէնիա լրագիրներուն մէջ։ Նմոյշներու մէջ փոքրիկ տեղեկութիւններ տըրուած են նաեւ թէ այդ ոտանաւորներ ինչ տպաւորութիւնների տակ ներշնչուելով գրուած են։ Գին (10 սանթիմ 15 սանթիմ։

ՄԻ ՊՈՒԼԿԱՐ ՀԱՅՐԵՆԱՍԷՐ
(ԶԱՔԱՐԻԱ ՏՓՈՐՈՒԳԱԼԵԱՆ)

ՖՐԱՆՍԵՐԷՆԷ ԹԱՐԳՄԱՆԵՑ
ՄԿՐՏՈՒՉ ՓՈՐԹՈՒԳԱԼԵԱՆ
1894

Պուլկարիոյ անկախութեան հերոսներէ մէկին, Զաքարիա Տփոյանովի, որ իր ընդունակութեան շնորհով յաջողեցաւ մի լեռնաբնակ գիւղացի հովուի պարզ վիճակէն հետզհետէ արհեստաւոր, վարժապետ, յեղափոխական գործիչ, խմբագրապետ և վերջապէս ազատ Պուլկարիոյ Ազգային ժողովի նախագահ դառնալ խիստ հետաքրքրաշարժ կենսագրութիւնն է, ուր ուշադրութեան արժանի տեղեկութիւններ կան նաեւ Պուլկարիան Թիւրքի լուծէն ազատելու աշխատող պուլկար հայրենասէր յեղափոխականներուն գործունէութեանը մասին։ Սկիզբը գրուած է նաեւ հեղինակին, Բրօֆէսէօր Լուի Լէժէի, և Թարգմանչին միջեւ եղած թղթակցութիւնը այս գրքի հայերէն Թարգմանութեանն առթիվ։

Հեղինակը շատ իրաւամբ կը գրէ իր յառաջաբանի վերջ թէ «Զարմանք պիտի պատճառէ ինձ եթէ ընթերցողներէ հետաքրքրութիւնը չգրժի պետական մարդ դարձած մի գիւղացիի այս վաւերական պատմութեան վրայ։»

Գինն է փոստի ծախքով մէկտեղ 1 ֆրանգ և 40 սանթիմ։

Տարածելու համար մեծ քանակութեամբ առնողներուն 25 % զեղչ կը լինի։

(Պարսկաստանի Հայերուն համար 1 ֆրանգ է։

Առձեռն ամերիկեան ՔԱՌԱՐԱՆ ԱՆԳԼԻԵՐԷՆԷ ՀԱՑԵՐԷՆ. (Ծատկապէս պատրաստուած Ամերիկայի Միացեալ Նահանգաց մէջ գտնուող հայ գաղթականներուն գործածուոր և բաղդատաբար քիչ ուսեալ դասակարգին Անգլիերէնի մէջ աւելի յառաջդիմելուն նպաստելու համար։) Աշխատասիրեց Պետրոս Ռ. Թորոսեան։ Կը պարունակէ աւելի քան 25,000 բառեր։ Նիւ Եորք. Էլիաս Թալաճ և Ընկ. 1899։

(«Պիտանի գիտելիքներ»ի և «Ինքնուսուցիչ անգլիերէն լեզուի» հեղինակ Տիար Պ. Ռ. Թորոսեանի 3րդ աշխատասիրութիւնն է այս որ կը հրատարակուի Նիւ Եորքի մէջ ինչպէս արդէն ծանուցուած էր։ Աշխատասիրողն իր աչքի առջեւ ունենալով ասկէ առաջ հրատարակուած անգլիերէն հայերէն բառարանները, չկանգաց է լաւագոյն բան մը արտադրել իր գծած սահմանին մէջ որի մասին բացատրութիւններ տրուած են գիրքի յառաջաբանին մէջ, ինչպէս և «Անգլիերէն և հայերէն ցարդ հրատարակուած բառարաններու բաղդատական քարտէզ»ին մէջ որ առանձին տպագրուած է։ Անգլիերէն ամեն մէկ բառի առջեւ իր հնչում դրուած է հայերէն տառերով։

Այս բառարան որ իր յառաջաբանէ և յաւելուածներէ զատ, 360 երկիչեան երեսներէ կը բաղկանայ փայլուն թուղթի վրայ գեղեցիկ տպագրութեամբ և կազմով, կը ծախուի Ուէսթ Հօպօքընի մէջ հեղինակին քով 2½ տոլարի։

Կարելի է նաև ստանալ Արմէնիոյ խմբագրատունէն 13 ֆրանգով Մարսէյլի մէջ. իսկ Մարսէյլէն դուրս ղրկուելու համար, փոստի ծախքովը մէկտեղ կարժէ 13 ֆր. և 80 սանթիմ. փոստին արձանագրել տրուած (registered) ղրկուելով 14 ֆրանգ։)

ՇԷՔՍՊԻՐԻ ՀԱՄԼԷԴԸ

Շէքսպիրի ՀԱՄԼԷԴԸ որ արևմտեան աշխարհաբար լեզուով հայերէնի թարգմանած է քալ անգլիագէտ Տիար Գարեգին Ց. փափազեան, կարկի է ստանալ նաև Արմէնիոյ խմբագրատունէն։

Տպագրուած է վիէննայի Մխիթարեանց տպարանը, մաքուր թղթի վրայ և ունի մեծ ութածալ դիրքով 183+իգ երես։

Գինն է 2 ֆրանգ և 50 սանթիմ։

ՏՆՕՐԷՆ—ԽՄԲԱԳԻՐ
Մ. ՓՈՐԹՈՒԳԱԼԵԱՆ

ՄԱՐՍԷԼ

Հայերէն տպարան Մ. Փորթուգալեանի
Le Gérant: François CARRIERE
Imp. M. Schickler, 9, Quai du Canal. Marseille.